



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

21 հոկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Նշան Իսախիրյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Նշան Իսախիրյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի հոկտեմբերի 5-ին)՝ խնդրելով.

«ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերում առկա «կատարելով համեմատական վերլուծություն» արտահայտությունները, 231-րդ հոդվածի 3-րդ մասում առկա «հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումը ազդել է գործի ելքի վրա» արտահայտությունները ճանաչել ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ.-ի փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ և ՀՀ Սահմանադրության (27.11.2005թ.-ի փոփոխություններով) 92-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով դրանք դիմումատուին հնարավորություն չեն ընձեռում

կանխորոշելու «համեմատական վերլուծություն» կատարելու և դատական սխալը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը «հիմնավորելու» չափանիշներն ու պայմանները»:

Ըստ դիմողի՝ օրենսդրի կողմից «համեմատական վերլուծություն» արտահայտության ընդհանուր և վերացական ձևակերպված լինելը հանգեցնում է դիմումատուի դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը:

Դիմողը գտնում է, որ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի որևէ այլ նորմում չի բացահայտել, թե որոնք են այն չափանիշներն ու պայմանները, որոնք պետք է պահպանված լինեն դատական սխալի վերաբերյալ հիմնավորումները և վերլուծությունները շարադրելիս:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի, այդ թվում՝ դատական ակտերի, նախնական ուսումնասիրության արդյունքներից, գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մասնակի ընդունման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի առնչությամբ.

դիմողի կողմից վիճարկվող իրավադրույթը նրա նկատմամբ չի կիրառվել:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը, նշված սահմանադրական դրույթին և դրա հիմքում ընկած սահմանադրական կոնկրետ վերահսկողության տրամաբանությանը համահունչ, սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները, այդ թվում՝ օրենքի դրույթի կիրառման պայմանը:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ «օրենքի դրույթի կիրառում» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը Սահմանադրական դատարանը բացահայտել է իր՝ 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, մասնավորապես, արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումը. «... ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...», ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող «...և չի կիրառվել» բառակապակցություններում «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշման՝ «...«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ»,

2) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում առկա՝ «կատարելով համեմատական վերլուծություն» արտահայտության առնչությամբ.

հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴԱՈ-91 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված՝ «Ադասի Տեր-Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսելու օր է նշանակվել 2016 թվականի դեկտեմբերի 27-ը:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջներով, գտնում ենք, որ հիշյալ գործին կարող է միավորվել Նշան Իսպիրյանի՝ վիճարկվող հոդվածի դրույթի մասով դիմումով գործը,

3) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասում առկա՝ «հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումը ազդել է գործի ելքի վրա» արտահայտության առնչությամբ.

դիմողը պահպանել է ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցը ենթակա է սահմանադրական դատարանին.
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան.
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում.
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում.
- դիմողն սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32, 39 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Նշան Իսպիրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի մասով մերժել:

2. Նշան Իսպիրյանի անհատական դիմումով գործը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում առկա՝ «կատարելով համեմատական վերլուծություն» արտահայտության մասով ընդունել քննության և առաջարկել այն միավորել ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 20-ի ՍԴԱ.Ո-91 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված՝

«Աղասի Տեր-Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործին:

3. Նշան Իսախրյանի անհատական դիմումով գործը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասում առկա՝ «հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումը ազդել է գործի ելքի վրա» արտահայտության մասով ընդունել քննության:

4. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հոկտեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-31